

**Անշարժ գույքի պետական միասնական կադաստր
վարող մարմնի կողմից անշարժ գույքի հարկով
հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ու
դրանց գնահատումների (վերագնահատումների)
վերաբերյալ ամփոփ տեղեկություններն, անշարժ
գույքի սեփականատերերի, անշարժ գույքի
հաշվառման ու գնահատման տվյալների
փոփոխությունների, անշարժ գույքի
լիզինգառուների, ինչպես նաև լիզինգի առարկա
հանդիսացող անշարժ գույքի հաշվառման ու
գնահատման տվյալների փոփոխությունների
վերաբերյալ տեղեկությունները տեղական
ինքնակառավարման մարմիններին ներկայացնելու
կարգը սահմանելու և Հայաստանի
Հանրապետության կառավարության 2017
թվականի ապրիլի 6-ի N 388-Ն որոշումն ուժը
կորցրած ճանաչելու մասին**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« » ——— 2023 թվականի N ____ -Ն

**ԱՆՇԱՐՇ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐ ՎԱՐՈՂ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ
ԱՆՇԱՐՇ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐՇ ԳՈՒՅՔԻ ՈՒ
ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ (ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՆՇԱՐՇ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ, ԱՆՇԱՐՇ ԳՈՒՅՔԻ
ՀԱԾՎԱՌՄԱՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՆՇԱՐՇ
ԳՈՒՅՔԻ ԼԻԶԻՆԳԱՌՈՒՄՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԼԻԶԻՆԳԻ ԱՌԱՐԿԱ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ԱՆՇԱՐՇ ԳՈՒՅՔԻ ՀԱԾՎԱՌՄԱՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ**

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 6-Ի N 388- Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 5-րդ կետերը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ և 37-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող մարմնի կողմից անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ու դրանց գնահատումների (վերագնահատումների) վերաբերյալ ամփոփ տեղեկությունները, անշարժ գույքի սեփականատերերի, անշարժ գույքի հաշվառման ու գնահատման տվյալների փոփոխությունների, անշարժ գույքի լիզինգառուների, ինչպես նաև լիզինգի առարկա հանդիսացող անշարժ գույքի հաշվառման ու գնահատման տվյալների փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունները տեղական ինքնակառավարման մարմիններին ներկայացնելու կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի «Անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ու դրանց գնահատումների (վերագնահատումների) վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմիններին տեղեկություններ ներկայացնելու կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 22-ի N 641-Ն և 2007 թվականի ապրիլի 19-ի N 465-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 388-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչել:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ն. Փաշինյան

Երևան

Կ Ա Ր Գ

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐ ՎԱՐՈՂ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՈՒ
ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ (ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՆՇԱՐԺ
ԳՈՒՅՔԻ ԼԻԶԻՆԳԱՌՈՒՄՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԼԻԶԻՆԳԻ ԱՌԱՐԿԱ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են կազմակերպությունների և ֆիզիկական անձանց (այսուհետ՝ անշարժ գույքի հարկ վճարողներ) անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ու դրանց գնահատումների (վերագնահատումների) վերաբերյալ ամփոփ տեղեկությունները, անշարժ գույքի սեփականատերերի, անշարժ գույքի հաշվառման ու գնահատման տվյալների փոփոխությունների, անշարժ գույքի լիզինգառուների, ինչպես նաև լիզինգի առարկա հանդիսացող անշարժ գույքի հաշվառման ու գնահատման տվյալների փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունները անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող մարմնի կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին ներկայացնելու հետ կապված հարաբերությունները: Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի ու դրանց գնահատումների (վերագնահատումների) վերաբերյալ տեղեկություններն անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող մարմնի կողմից ներկայացվում են Երևանի համայնքին՝ խմբավորված՝ ըստ անշարժ գույքի գտնվելու վայրի համապատասխան վարչական շրջանների:
2. Սույն կարգում օգտագործվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված հիմնական հասկացությունները:
3. Անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող մարմինը տեղական ինքնակառավարման մարմիններին է ներկայացնում՝

1) գնահատման կամ վերագնահատման հարկային տարվա հուլիսի 1-ի

դրությամբ հաշվառված ու գնահատված (վերագնահատված)՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ու դրանց գնահատումների (վերագնահատումների) վերաբերյալ ամփոփ տեղեկությունները մինչև գնահատման (վերագնահատման) հարկային տարվա սեպտեմբերի 1-ը ներառյալ՝ համաձայն N 1 ձևի և դրա լրացման համար նախատեսված կարգի:

2) մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը ներառյալ՝ նախորդ ամսվա ընթացքում անշարժ գույքի սեփականատերերի և լիզինգառուների փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն N 2 ձևի և դրա լրացման համար նախատեսված կարգի:

3) մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը ներառյալ՝ նախորդ ամսվա ընթացքում անշարժ գույքի և լիզինգի առարկա հանդիսացող անշարժ գույքի հաշվառման ու գնահատման տվյալների փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն N 3 ձևի և դրա լրացման համար նախատեսված կարգի:

4) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան՝ վարձակալության, կառուցապատման, ինչպես նաև անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրված անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող մարմնի կողմից գրանցված համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն սույն հավելվածով դրա ներկայացման համար նախատեսված կարգի:

4. Սույն կարգի 3-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերում նշված տեղեկություններն անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող մարմինը ներկայացնում է էլեկտրոնային տեսքով՝ տեղեկությունները տեղադրելով իր պաշտոնական ինտերնետային կայքում, և յուրաքանչյուր համայնք իր վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի մասին տեղեկություններից օգտվում է նախօրոք տրամադրված մոլտքի անվան ու գաղտնաբառի միջոցով:

5. Սույն կարգի 3-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունները Համայնքային էլեկտրոնային կառավարման միասնական հարթակի (ՀԷԿՄՀ) օպերատորին են տրամադրվում նաև ինքնաշխատ եղանակով՝ կառավարության փոխգործելիության հարթակի միջոցով, ընդ որում՝ 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունները ինքնաշխատ եղանակով տրամադրվում են յուրաքանչյուր գործարքից հետո անմիջապես:

6. www.e-community.am տիրույթում գտնվող համայնքային էլեկտրոնային կառավարման միասնական հարթակի (ՀԷԿՄՀ) օպերատոր է հանդիսանում «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերությունը («ԷԿԵՆԳ» ՓԲԸ):

2. ԱՆՇԱՐՇ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐՇ

**ԳՈՒՅՔԻ ՈՒ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ (ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ)
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ N 1 ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ
ԿԱՐԳԸ**

7. Ձևաթղթի վանդակները լրացվում են նշագրումներին համապատասխան: Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի համար ամփոփ տեղեկությունների ձևաթղթի վերնամասի «Մարզը» գրառման համապատասխան վանդակներում լրացվում են Երևան քաղաքի տվյալները, իսկ «Համայնքը» գրառման համապատասխան վանդակներում՝ Երևանի համապատասխան վարչական շրջանի տվյալները:
8. Անշարժ գույքի ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության դեպքում բոլոր համասեփականատերերի, իսկ լիզինգի առարկա հանդիսացող անշարժ գույքի լիզինգառուների տվյալները լրացվում է հաջորդաբար՝ առանձին նոր տողերով:
9. Ամփոփ տեղեկությունների 1-ին սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է գույքային միավոր հանդիսացող յուրաքանչյուր անշարժ գույքի հերթական համարը: Համասեփականատերերի և լիզինգառուների համար նույն գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի հերթական համարը չի փոփոխվում:
10. Ամփոփ տեղեկությունների 2-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» Էլեկտրոնային ծրագրում գույքային միավոր հանդիսացող յուրաքանչյուր անշարժ գույքի արխիվային ծածկագիրը, իսկ 3-րդ սյունակում՝ գույքային միավոր հանդիսացող յուրաքանչյուր անշարժ գույքը նույնականացնող միավորի բանալին:
11. Ամփոփ տեղեկությունների 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ սյունակներում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի սեփականատիրոջ (համասեփականատերերի) կամ պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողի կամ լիզինգառուի (լիզինգառուների) հաշվառման (գրանցման) կամ կազմակերպության գտնվելու վայրի հասցեի տեքստային տվյալները, ինչպես նաև տվյալ հասցեի նույնականացման բաղադրիչը: Մարզի և համայնքի (վարչական շրջանի) սյունակներում լրացվում են համապատասխան ծածկագրերը կամ տեքստային տվյալները:
12. Ամփոփ տեղեկությունների 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ սյունակներում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի սեփականատիրոջ (համասեփականատերերի) կամ պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողի կամ լիզինգառուի (լիզինգառուների) տեքստային տվյալները՝ ֆիզիկական անձի ազգանունը կամ կազմակերպության անվանումը (ներառյալ՝ կազմակերպական-իրավական ձևը), ֆիզիկական անձի անունը, հայրանունը, ֆիզիկական անձի անձը հաստատող փաստաթղթի տվյալները կամ կազմակերպության պետական ռեգիստրում գրանցման համարը, ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը կամ

կազմակերպության հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ):
Ֆիզիկական անձ կամ կազմակերպություն չհանդիսացող գրանցման
սուբյեկտների համար ամփոփ տեղեկությունների 10-13-րդ սյունակները
չեն լրացվում:

13. Ամփոփ տեղեկությունների 14-րդ, 15-րդ և 16-րդ սյունակներում, ըստ
տողերի, հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր գույքային միավոր
հանդիսացող անշարժ գույքի գտնվելու վայրի հասցեի տեքստային
տվյալները, ինչպես նաև տվյալ հասցեի նույնականացման բաղադրիչը:
Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն
անշարժ գույքի գտնվելու վայրի հասցեն առաջին
համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր
տողերում չի լրացվում:
14. Ամփոփ տեղեկությունների 17-րդ սյունակում, ըստ տողերի,
հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր
հանդիսացող անշարժ գույքի՝ հողամասի կադաստրային ծածկագիրը:
Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար հողամասի
կադաստրային ծածկագիրն առաջին համասեփականատիրոջ կամ
լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:
15. Ամփոփ տեղեկությունների 18-րդ սյունակում, ըստ տողերի,
հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր
հանդիսացող անշարժ գույքի՝ հողամասի Հայաստանի
Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված հողային ֆոնդին
համապատասխան նպատակային նշանակությունը՝

1) գյուղատնտեսական նշանակության դեպքում լրացվում է՝ 1, բնակավայրերի
նշանակության դեպքում՝ 2, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ
արտադրական նշանակության դեպքում՝ 3, Էներգետիկայի, տրանսպորտի,
կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների դեպքում՝ 4, հատուկ
պահպանվող տարածքների դեպքում՝ 5, հատուկ նշանակության հողերի
դեպքում՝ 6, անտառային հողերի դեպքում՝ 7, ջրային հողերի դեպքում՝ 8,
պահուստային հողերի դեպքում՝ 9:

2) համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն հողամասի
նպատակային նշանակությունն առաջին համասեփականատիրոջ կամ
լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:

16. Ամփոփ տեղեկությունների 19-րդ սյունակում, ըստ տողերի,
հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր
հանդիսացող անշարժ գույքի՝ հողամասի Հայաստանի
Հանրապետության հողային օրենսգրքին համապատասխան
գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

1) գյուղատնտեսական նշանակության հողերի համար ջրովի վարելահողերի
դեպքում լրացվում է 1/1, անջրդի վարելահողերի դեպքում՝ 1/2, բազմամյա
տնկարկների համար խաղողի դեպքում՝ 1/3, կորիզավորի դեպքում՝ 1/4,
հնդավորի դեպքում՝ 1/5, խոտհարքների համար՝ 1/6, արոտավայրերի համար՝
1/7, այլ գյուղատնտեսական հողատեսքերի համար՝ 1/8.

2) բնակավայրերի հողերի համար բնակելի կառուցապատման հողերի
դեպքում լրացվում է 2/1, հասարակական կառուցապատման հողերի դեպքում՝

2/2, խառը կառուցապատման հողերի դեպքում՝ 2/3, ընդհանուր օգտագործման հողերի դեպքում՝ 2/4, այլ հողերի դեպքում՝ 2/5.

3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի համար արդյունաբերական օբյեկտների դեպքում լրացվում է 3/1, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների դեպքում՝ 3/2, պահեստարանների դեպքում՝ 3/3, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի դեպքում՝ 3/4.

4) էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի համար էներգետիկայի հողերի դեպքում լրացվում է 4/1, կապի հողերի դեպքում՝ 4/2, տրանսպորտի հողերի դեպքում՝ 4/3, կոմունալ ենթակառուցվածքների հողերի դեպքում՝ 4/4.

5) հատուկ պահպանվող տարածքների հողերի համար բնապահպանական հողերի դեպքում լրացվում է 5/1, առողջարարական նպատակներով նախատեսված հողերի դեպքում՝ 5/2, հանգստի համար նախատեսված հողերի դեպքում՝ 5/3, պատմական և մշակութային հողերի դեպքում՝ 5/4.

6) համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:

17. Ամփոփ տեղեկությունների 20-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ հողամասի համապատասխան հողակադաստրային գնահատման շրջանը: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն հողամասի համապատասխան հողակադաստրային գնահատման շրջանը առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:
18. Ամփոփ տեղեկությունների 21-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ գյուղատնտեսական նշանակության հողամասի համապատասխան հողատեսքի գնահատման խումբը: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն գյուղատնտեսական նշանակության հողամասի համապատասխան հողատեսքի գնահատման խումբն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:
19. Ամփոփ տեղեկությունների 22-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ ոչ գյուղատնտեսական նշանակության հողամասի տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտին: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն ոչ գյուղատնտեսական նշանակության հողամասի տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտին առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:
20. Ամփոփ տեղեկությունների 23-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր

հանդիսացող անշարժ գույքի՝ գնահատվող հողամասի չափը՝
հեկտարներով: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար
միևնույն գնահատվող հողամասի չափն առաջին
համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր
տողերում չի լրացվում:

21. Ամփոփ տեղեկությունների 24-րդ սյունակում, ըստ տողերի,
հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր
հանդիսացող անշարժ գույքի՝ գնահատվող հողամասի կարգավիճակին
համապատասխանող նշումը՝ չկառուցապատված հողամասի դեպքում՝
0, կառուցապատված հողամասի դեպքում՝ 1: Համասեփականատերերի
կամ լիզինգառուների համար միևնույն գնահատվող հողամասի
կարգավիճակին համապատասխանող նշումը առաջին
համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր
տողերում չի լրացվում:
22. Ամփոփ տեղեկությունների 25-րդ սյունակում, ըստ տողերի,
հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր
հանդիսացող անշարժ գույքի՝ հողամասի բարելավումների
(շինությունների) կադաստրային ծածկագիրը:
Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար հողամասի
բարելավումների (շինությունների) կադաստրային ծածկագիրն առաջին
համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր
տողերում չի լրացվում:
23. Ամփոփ տեղեկությունների 26-րդ սյունակում, ըստ տողերի,
հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր
հանդիսացող անշարժ գույքի՝ հողամասի բարելավումների
(շինությունների) օրենքին համապատասխան անվանումը՝ ըստ
նպատակային նշանակության՝

1) նպատակային նշանակության տվյալների առումով բնակելի նշանակության
դեպքում լրացվում է՝ 1 (ընդ որում, անհատական բնակելի տան համար՝ 1/1,
բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանի համար՝ 1/2, այգետնակի
(ամառանոցի) համար՝ 1/3, բազմաբնակարան բնակելի շենքի համար՝ 1/4,
բազմաբնակարան շենքի ոչ բնակելի տարածքի համար՝ 1/5, ավտոտնակի
համար՝ 1/6), հասարակական նշանակության դեպքում՝ 2, արտադրական
նշանակության դեպքում՝ 3.

2) համասեփականատերերի կամ լիզինգառուների համար հողամասի միևնույն
բարելավումների (շինությունների) տվյալներն առաջին
համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր
տողերում չեն լրացվում:

24. Ամփոփ տեղեկությունների 27-րդ սյունակում, ըստ տողերի,
հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր գույքային միավոր
հանդիսացող անշարժ գույքի՝ հողամասի բարելավումների
(շինությունների) համապատասխան գործառնական նշանակության
տեքստային տվյալները: Համասեփականատերերի կամ
լիզինգառուների համար հողամասի միևնույն բարելավումների
(շինությունների) գործառնական նշանակության տվյալներն առաջին
համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր
տողերում չեն լրացվում:

25. Ամփոփ տեղեկությունների 28-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ հողամասի անավարտ (կիսակառույց) բարելավումների (շինությունների) ավարտվածության աստիճանին համապատասխանող նշումը՝ «անավարտ»-ի դեպքում՝ 0, «մինչև 50%»-ի դեպքում՝ 1, «50-80%»-ի դեպքում՝ 2, «80% և ավելի»-ի դեպքում՝ 3: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար հողամասի միևնույն բարելավումների (շինությունների) ավարտվածության աստիճանի տվյալներն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չեն լրացվում:
26. Ամփոփ տեղեկությունների 29-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ հողամասի բարելավումների (շինությունների) տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտին: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար հողամասի միևնույն բարելավումների (շինությունների) տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտին առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:
27. Ամփոփ տեղեկությունների 30-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են հողամասի բարելավումների (շինությունների)՝ յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի, այդ թվում՝ անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող մարմնի կողմից հաշվառված ինքնակամ կառուցված շինությունների ընդհանուր ներքին մակերեսները՝ արտահայտված քառակուսի մետրերով: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար հողամասի միևնույն բարելավումների (շինությունների) ընդհանուր ներքին մակերեսները առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չեն լրացվում:
28. Ամփոփ տեղեկությունների 31-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ գյուղատնտեսական նշանակության հողամասի համար լրացվում է կադաստրային գնահատման կարգով հաշվարկված հաշվարկային զուտ եկամուտը՝ արտահայտված ՀՀ դրամով (1 հեկտարի համար): Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն գյուղատնտեսական նշանակության հողամասի կադաստրային գնահատման կարգով հաշվարկված հաշվարկային զուտ եկամուտն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդաբար նոր տողերում չի լրացվում:
29. Ամփոփ տեղեկությունների 32-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի համար (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) լրացվում է անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը՝ արտահայտված ՀՀ դրամով: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար անշարժ գույքի հարկով հարկման նպատակով միևնույն անշարժ գույքի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդաբար

Նոր տողերում չի լրացվում:

30. Ամփոփ տեղեկությունների 33-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի համար (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) լրացվում է անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված հողամասի կադաստրային արժեքը՝ արտահայտված ՀՀ դրամով: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար անշարժ գույքի հարկով հարկման նպատակով միևնույն անշարժ գույքի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) շուկայական արժեքին մոտարկված հողամասի կադաստրային արժեքը առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդաբար նոր տողերում չի լրացվում:
31. Ամփոփ տեղեկությունների 34-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի համար (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) լրացվում է անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված հողամասի բարելավումների (շինությունների) կադաստրային արժեքը՝ արտահայտված ՀՀ դրամով: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար անշարժ գույքի հարկով հարկման նպատակով միևնույն անշարժ գույքի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) շուկայական արժեքին մոտարկված հողամասի բարելավումների (շինությունների) կադաստրային արժեքը առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդաբար նոր տողերում չի լրացվում:
32. Ամփոփ տեղեկությունների 35-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի համար լրացվում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարեթիվը (օրինակ՝ 2005 թվականի հուլիսի 15-ի գրանցումը նշվում է՝ 15.07.2005): Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ամսաթիվն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդաբար նոր տողերում չի լրացվում:
33. Ամփոփ տեղեկությունների 36-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողի կամ լիզինգառուի համար լրացվում է 1, յուրաքանչյուր համասեփականատիրոջ համար՝ ընդհանուր համատեղ սեփականության դեպքում լրացվում է 2, ընդհանուր բաժնային սեփականության դեպքում նշվում է բաժնեմասը (նշվում է կոտորակով, օրինակ՝ 1/2, 1/5, 2/5 և այլն), իսկ լիզինգառուների դեպքում՝ յուրաքանչյուր լիզինգառուի համար լրացվում է 2:
34. Ամփոփ տեղեկությունների 37-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է գրանցման սուբյեկտը, որի համար ֆիզիկական անձանց դեպքում նշվում է 1, կազմակերպության դեպքում՝ 2, Հայաստանի Հանրապետության (պետական սեփականության) դեպքում՝ 3, տեղական ինքնակառավարման մարմնի

դեպքում՝ 4, այլ սուբյեկտի դեպքում՝ 5:

3. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏ ՀԱՄԱՐԿՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԵՎ ԼԻԶԵՆԳԱՌՈՒՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ N 2 ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

35. Ձևաթղթի վանդակները լրացվում են նշագրումներին համապատասխան: Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի համար տեղեկությունների ձևաթղթի վերնամասի «Մարզը» գրառման համապատասխան վանդակներում լրացվում են Երևան քաղաքի տվյալները, իսկ «Համայնքը» գրառման համապատասխան վանդակներում՝ Երևանի համապատասխան վարչական շրջանի տվյալները:
36. Անշարժ գույքի ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության դեպքում բոլոր համասեփականատերերի, իսկ լիզինգի առարկա հանդիսացող անշարժ գույքի լիզինգառուների տվյալները լրացվում են հաջորդաբար՝ առանձին նոր տողերով:
37. Տեղեկությունների 1-ին սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է գույքային միավոր հանդիսացող յուրաքանչյուր անշարժ գույքի հերթական համարը: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար նույն գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի հերթական համարը չի փոփոխվում:
38. Տեղեկությունների 2-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» էլեկտրոնային ծրագրում գույքային միավոր հանդիսացող յուրաքանչյուր անշարժ գույքի արխիվային ծածկագիրը, իսկ 3-րդ սյունակում՝ գույքային միավոր հանդիսացող յուրաքանչյուր անշարժ գույքը նույնականացնող միավորի բանալին:
39. Տեղեկությունների 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ սյունակներում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի նոր սեփականատիրոջ (համասեփականատերերի) կամ պետական սեփականություն հանդիսացող հողի նոր մշտական օգտագործողի կամ նոր լիզինգառուի (լիզինգառուների) հաշվառման (գրանցման) կամ կազմակերպության գտնվելու վայրի հասցեի տեքստային տվյալները, ինչպես նաև տվյալ հասցեի նույնականացման բաղադրիչը: Մարզի և համայնքի (վարչական շրջանի) սյունակներում լրացվում են համապատասխան ծածկագրերը կամ տեքստային տվյալները:
40. Տեղեկությունների 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ սյունակներում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի նոր սեփականատիրոջ (համասեփականատերերի) կամ պետական սեփականություն հանդիսացող հողի նոր մշտական օգտագործողի կամ նոր լիզինգառուի

(լիզինգառուների) տեքստային տվյալները՝ ֆիզիկական անձի ազգանունը կամ կազմակերպության անվանումը (ներառյալ՝ կազմակերպական-իրավական ձևը), ֆիզիկական անձի անունը, հայրանունը, ֆիզիկական անձի անձը հաստատող փաստաթղթի տվյալները կամ կազմակերպության պետական ռեգիստրում գրանցման համարը, ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը կամ կազմակերպության հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ): Ֆիզիկական անձ կամ կազմակերպություն չհանդիսացող գրանցման սուբյեկտների համար տեղեկությունների 10-13-րդ սյունակները չեն լրացվում:

41. Տեղեկությունների 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 18-րդ սյունակներում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի նախկին սեփականատիրոջ (համասեփականատերերի) կամ պետական սեփականություն հանդիսացող հողի նախկին մշտական օգտագործողի կամ նախկին լիզինգառուի (լիզինգառուների) տեքստային տվյալները՝ ֆիզիկական անձի ազգանունը կամ կազմակերպության անվանումը (ներառյալ՝ կազմակերպական-իրավական ձևը), ֆիզիկական անձի անունը, հայրանունը, ֆիզիկական անձի անձը հաստատող փաստաթղթի տվյալները կամ կազմակերպության պետական ռեգիստրում գրանցման համարը, ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը կամ կազմակերպության հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ): Ֆիզիկական անձ կամ կազմակերպություն չհանդիսացող գրանցման սուբյեկտների համար տեղեկությունների 15-18-րդ սյունակները չեն լրացվում:
42. Տեղեկությունների 19-րդ, 20-րդ և 21-րդ սյունակներում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի գտնվելու վայրի հասցեի տեքստային տվյալները, ինչպես նաև տվյալ հասցեի նույնականացման բաղադրիչը: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն անշարժ գույքի գտնվելու վայրի հասցեն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:
43. Տեղեկությունների 22-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ հողամասի կադաստրային ծածկագիրը: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար հողամասի կադաստրային ծածկագիրն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:
44. Տեղեկությունների 23-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ հողամասի Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված հողային ֆոնդին համապատասխան նպատակային նշանակությունը՝

1) գյուղատնտեսական նշանակության դեպքում լրացվում է՝ 1, բնակավայրերի նշանակության դեպքում՝ 2, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության դեպքում՝ 3, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների դեպքում՝ 4, հատուկ պահպանվող տարածքների դեպքում՝ 5, հատուկ նշանակության հողերի

դեպքում 6, անտառային հողերի դեպքում 7, ջրային հողերի դեպքում 8, պահուստային հողերի դեպքում 9.

2) համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն հողամասի նպատակային նշանակությունն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:

45. Տեղեկությունների 24-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ հողամասի Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքին համապատասխան գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

1) գյուղատնտեսական նշանակության հողերի համար ջրովի վարելահողերի դեպքում լրացվում է 1/1, անջրդի վարելահողերի դեպքում 1/2, բազմամյա տնկարկների համար խաղողի դեպքում 1/3, կորիզավորի դեպքում 1/4, հնդավորի դեպքում 1/5, խոտհարքների համար՝ 1/6, արոտավայրերի համար՝ 1/7, այլ գյուղատնտեսական հողատեսքերի համար՝ 1/8.

2) բնակավայրերի հողերի համար բնակելի կառուցապատման հողերի դեպքում լրացվում է 2/1, հասարակական կառուցապատման հողերի դեպքում 2/2, խառը կառուցապատման հողերի դեպքում 2/3, ընդհանուր օգտագործման հողերի դեպքում 2/4, այլ հողերի դեպքում 2/5.

3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի համար արդյունաբերական օբյեկտների դեպքում լրացվում է 3/1, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների դեպքում 3/2, պահեստարանների դեպքում 3/3, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի դեպքում 3/4.

4) Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի համար Էներգետիկայի հողերի դեպքում լրացվում է 4/1, կապի հողերի դեպքում 4/2, տրանսպորտի հողերի դեպքում 4/3, կոմունալ ենթակառուցվածքների հողերի դեպքում 4/4.

5) հատուկ պահպանվող տարածքների հողերի համար բնապահպանական հողերի դեպքում լրացվում է 5/1, առողջարարական նպատակներով նախատեսված հողերի դեպքում 5/2, հանգստի համար նախատեսված հողերի դեպքում 5/3, պատմական և մշակութային հողերի դեպքում 5/4.

6) համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:

46. Տեղեկությունների 25-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ հողամասի համապատասխան հողակադաստրային գնահատման շրջանը: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն հողամասի համապատասխան հողակադաստրային

գնահատման շրջանը առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:

47. Տեղեկությունների 26-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ գյուղատնտեսական նշանակության հողամասի համապատասխան հողատեսքի գնահատման խումբը:
Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն գյուղատնտեսական նշանակության հողամասի համապատասխան հողատեսքի գնահատման խումբն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:
48. Տեղեկությունների 27-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ ոչ գյուղատնտեսական նշանակության հողամասի տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտին:
Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն ոչ գյուղատնտեսական նշանակության հողամասի տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտին առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:
49. Տեղեկությունների 28-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ գնահատվող հողամասի չափը՝ հեկտարներով:
Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն գնահատվող հողամասի չափն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:
50. Տեղեկությունների 29-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ գնահատվող հողամասի կարգավիճակին համապատասխանող նշումը՝ չկառուցապատված հողամասի դեպքում՝ 0, կառուցապատված հողամասի դեպքում՝ 1: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն գնահատվող հողամասի կարգավիճակին համապատասխանող նշումը առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:
51. Տեղեկությունների 30-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ հողամասի բարելավումների (շինությունների) կադաստրային ծածկագիրը: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար հողամասի բարելավումների (շինությունների) կադաստրային ծածկագիրն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:
52. Տեղեկությունների 31-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ հողամասի բարելավումների (շինությունների) օրենքին համապատասխան անվանումը՝ ըստ նպատակային նշանակության՝

1) նպատակային նշանակության տվյալների առումով բնակելի նշանակության դեպքում լրացվում է՝ 1 (ընդ որում, անհատական բնակելի տան համար՝ 1/1, բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանի համար՝ 1/2, այգետնակի (ամառանոցի) համար՝ 1/3, բազմաբնակարան բնակելի շենքի համար՝ 1/4, բազմաբնակարան շենքի ոչ բնակելի տարածքի համար՝ 1/5, ավտոտնակի համար՝ 1/6), հասարակական նշանակության դեպքում՝ 2, արտադրական

նշանակության դեպքում՝ 3.

2) համասեփականատերերի կամ լիզինգառուների համար հողամասի միևնույն բարելավումների (շինությունների) տվյալներն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չեն լրացվում:

53. Տեղեկությունների 32-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ հողամասի բարելավումների (շինությունների) համապատասխան գործառնական նշանակության տեքստային տվյալները: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար հողամասի միևնույն բարելավումների (շինությունների) գործառնական նշանակության տվյալներն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չեն լրացվում:
54. Տեղեկությունների 33-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ հողամասի անավարտ (կիսակառույց) բարելավումների (շինությունների) ավարտվածության աստիճանին համապատասխանող նշումը՝ «անավարտ»-ի դեպքում՝ 0, «մինչև 50%»-ի դեպքում՝ 1, «50-80%»-ի դեպքում՝ 2, «80% և ավելի»-ի դեպքում՝ 3: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար հողամասի միևնույն բարելավումների (շինությունների) ավարտվածության աստիճանի տվյալներն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չեն լրացվում:
55. Տեղեկությունների 34-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ հողամասի բարելավումների (շինությունների) տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտին: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար հողամասի միևնույն բարելավումների (շինությունների) տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտին առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:
56. Տեղեկությունների 35-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են հողամասի բարելավումների (շինությունների)՝ յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի, այդ թվում՝ անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող մարմնի կողմից հաշվառված ինքնակամ կառուցված շինությունների՝ ընդհանուր ներքին մակերեսները՝ արտահայտված քառակուսի մետրերով: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար հողամասի միևնույն բարելավումների (շինությունների) ընդհանուր ներքին մակերեսները առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չեն լրացվում:
57. Տեղեկությունների 36-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ գյուղատնտեսական նշանակության հողամասի համար լրացվում է կադաստրային գնահատման կարգով հաշվարկված հաշվարկային զուտ եկամուտը՝ արտահայտված ՀՀ դրամով (1 հեկտարի համար): Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն

գյուղատնտեսական նշանակության հողամասի կադաստրային գնահատման կարգով հաշվարկված հաշվարկային զուտ եկամուտն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:

58. Տեղեկությունների 37-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի համար (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) լրացվում է անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը՝ արտահայտված ՀՀ դրամով: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար անշարժ գույքի հարկով հարկման նպատակով միևնույն անշարժ գույքի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:
59. Տեղեկությունների 38-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի համար (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) լրացվում է անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված հողամասի կադաստրային արժեքը՝ արտահայտված ՀՀ դրամով: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար անշարժ գույքի հարկով հարկման նպատակով միևնույն անշարժ գույքի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) շուկայական արժեքին մոտարկված հողամասի կադաստրային արժեքը առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:
60. Տեղեկությունների 39-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի համար (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) լրացվում է անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված հողամասի բարելավումների (շինությունների) կադաստրային արժեքը՝ արտահայտված ՀՀ դրամով: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար անշարժ գույքի հարկով հարկման նպատակով միևնույն անշարժ գույքի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) շուկայական արժեքին մոտարկված հողամասի բարելավումների (շինությունների) կադաստրային արժեքը առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:
61. Տեղեկությունների 40-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի համար լրացվում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարեթիվը (օրինակ՝ 2005 թվականի հուլիսի 15-ի գրանցումը նշվում է՝ 15.07.2005): Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ամսաթիվն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:
62. Տեղեկությունների 41-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի նոր

սեփականատիրոջ կամ պետական սեփականություն հանդիսացող հողի նոր մշտական օգտագործողի կամ նոր լիզինգառուի համար լրացվում է 1, յուրաքանչյուր նոր համասեփականատիրոջ համար՝ ընդհանուր համատեղ սեփականության դեպքում լրացվում է 2, ընդհանուր բաժնային սեփականության դեպքում նշվում է բաժնեմասը (նշվում է կոտորակով, օրինակ՝ 1/2, 1/5, 2/5 և այլն), իսկ նոր լիզինգառուների դեպքում՝ յուրաքանչյուր նոր լիզինգառուի համար լրացվում է 2:

63. Տեղեկությունների 42-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է գրանցման սուբյեկտը, որի համար ֆիզիկական անձանց դեպքում նշվում է 1, կազմակերպության դեպքում՝ 2, Հայաստանի Հանրապետության (պետական սեփականության) դեպքում՝ 3, տեղական ինքնակառավարման մարմնի դեպքում՝ 4, այլ սուբյեկտի դեպքում՝ 5:

4. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԼԻԶԻՆԳԻ ԱՌԱՐԿԱ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ N 3 ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

64. Ձևաթղթի վանդակները լրացվում են նշագրումներին համապատասխան: Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի համար տեղեկությունների ձևաթղթի վերնամասի «Մարզը» գրառման համապատասխան վանդակներում լրացվում են Երևան քաղաքի տվյալները, իսկ «Համայնքը» գրառման համապատասխան վանդակներում՝ Երևանի համապատասխան վարչական շրջանի տվյալները:
65. Անշարժ գույքի ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության դեպքում բոլոր համասեփականատերերի, իսկ լիզինգի առարկա հանդիսացող անշարժ գույքի լիզինգառուների տվյալները լրացվում են հաջորդաբար՝ առանձին նոր տողերով:
66. Տեղեկությունների 1-ին սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է գույքային միավոր հանդիսացող յուրաքանչյուր անշարժ գույքի հերթական համարը: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար նույն գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի հերթական համարը չի փոփոխվում:
67. Տեղեկությունների 2-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» էլեկտրոնային ծրագրում գույքային միավոր հանդիսացող յուրաքանչյուր անշարժ գույքի արխիվային ծածկագիրը, իսկ 3-րդ սյունակում՝ գույքային միավոր հանդիսացող յուրաքանչյուր անշարժ գույքը նույնականացնող միավորի բանալին:
68. Տեղեկությունների 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ սյունակներում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի սեփականատիրոջ (համասեփականատերերի) կամ պետական սեփականություն

հանդիսացող հողի մշտական օգտագործողի կամ լիզինգառուի (լիզինգառուների) հաշվառման (գրանցման) կամ կազմակերպության գտնվելու վայրի հասցեի տեքստային տվյալները, ինչպես նաև տվյալ հասցեի նույնականացման բաղադրիչը: Մարզի և համայնքի (վարչական շրջանի) սյունակներում լրացվում են համապատասխան ծածկագրերը կամ տեքստային տվյալները:

69. Տեղեկությունների 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ սյունակներում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի սեփականատիրոջ (համասեփականատերերի) կամ պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողի կամ լիզինգառուի (լիզինգառուների) տեքստային տվյալները՝ ֆիզիկական անձի ազգանունը կամ կազմակերպության անվանումը (ներառյալ՝ կազմակերպական-իրավական ձևը), ֆիզիկական անձի անունը, հայրանունը, ֆիզիկական անձի անձը հաստատող փաստաթղթի տվյալները կամ կազմակերպության պետական ռեգիստրում գրանցման համարը, ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը կամ կազմակերպության հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ): Ֆիզիկական անձ կամ կազմակերպություն չհանդիսացող գրանցման սուբյեկտների համար տեղեկությունների 10-13-րդ սյունակները չեն լրացվում:
70. Տեղեկությունների 14-րդ, 15-րդ և 16-րդ սյունակներում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի գտնվելու վայրի հասցեի տեքստային տվյալները, ինչպես նաև տվյալ հասցեի նույնականացման բաղադրիչը: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն անշարժ գույքի գտնվելու վայրի հասցեն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:
71. Տեղեկությունների 17-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ հողամասի կադաստրային ծածկագիրը: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար հողամասի կադաստրային ծածկագիրն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:
72. Տեղեկությունների 18-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ հողամասի Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված հողային ֆոնդին համապատասխան նպատակային նշանակությունը՝

1) գյուղատնտեսական նշանակության դեպքում լրացվում է՝ 1, բնակավայրերի նշանակության դեպքում՝ 2, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության դեպքում՝ 3, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների դեպքում՝ 4, հատուկ պահպանվող տարածքների դեպքում՝ 5, հատուկ նշանակության հողերի դեպքում՝ 6, անտառային հողերի դեպքում՝ 7, ջրային հողերի դեպքում՝ 8, պահուստային հողերի դեպքում՝ 9.

2) համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն հողամասի

նպատակային նշանակությունն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:

73. Տեղեկությունների 19-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ հողամասի Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքին համապատասխան գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

1) գյուղատնտեսական նշանակության հողերի համար ջրովի վարելահողերի դեպքում լրացվում է 1/1, անջրդի վարելահողերի դեպքում՝ 1/2, բազմամյա տնկարկների համար խաղողի դեպքում՝ 1/3, կորիզավորի դեպքում՝ 1/4, հնդավորի դեպքում՝ 1/5, խոտհարքների համար՝ 1/6, արոտավայրերի համար՝ 1/7, այլ գյուղատնտեսական հողատեսքերի համար՝ 1/8.

2) բնակավայրերի հողերի համար բնակելի կառուցապատման հողերի դեպքում լրացվում է 2/1, հասարակական կառուցապատման հողերի դեպքում՝ 2/2, խառը կառուցապատման հողերի դեպքում՝ 2/3, ընդհանուր օգտագործման հողերի դեպքում՝ 2/4, այլ հողերի դեպքում՝ 2/5.

3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի համար արդյունաբերական օբյեկտների դեպքում լրացվում է 3/1, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների դեպքում՝ 3/2, պահեստարանների դեպքում՝ 3/3, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի դեպքում՝ 3/4.

4) Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի համար Էներգետիկայի հողերի դեպքում լրացվում է 4/1, կապի հողերի դեպքում՝ 4/2, տրանսպորտի հողերի դեպքում՝ 4/3, կոմունալ ենթակառուցվածքների հողերի դեպքում՝ 4/4.

5) հատուկ պահպանվող տարածքների հողերի համար բնապահպանական հողերի դեպքում լրացվում է 5/1, առողջարարական նպատակներով նախատեսված հողերի դեպքում՝ 5/2, հանգստի համար նախատեսված հողերի դեպքում՝ 5/3, պատմական և մշակութային հողերի դեպքում՝ 5/4.

6) համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:

74. Տեղեկությունների 20-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ հողամասի համապատասխան հողակադաստրային գնահատման շրջանը: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն հողամասի համապատասխան հողակադաստրային գնահատման շրջանը առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:

75. Տեղեկությունների 21-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ

գույքի՝ գյուղատնտեսական նշանակության հողամասի համապատասխան հողատեսքի գնահատման խումբը:
Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն գյուղատնտեսական նշանակության հողամասի համապատասխան հողատեսքի գնահատման խումբն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:

76. Տեղեկությունների 22-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ ոչ գյուղատնտեսական նշանակության հողամասի տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտին:
Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն ոչ գյուղատնտեսական նշանակության հողամասի տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտին առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:
77. Տեղեկությունների 23-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ գնահատվող հողամասի չափը՝ հեկտարներով:
Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն գնահատվող հողամասի չափն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:
78. Տեղեկությունների 24-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ գնահատվող հողամասի կարգավիճակին համապատասխանող նշումը՝ չկառուցապատված հողամասի դեպքում՝ 0, կառուցապատված հողամասի դեպքում՝ 1: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն գնահատվող հողամասի կարգավիճակին համապատասխանող նշումը առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:
79. Տեղեկությունների 25-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ հողամասի բարելավումների (շինությունների) կադաստրային ծածկագիրը: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար հողամասի բարելավումների (շինությունների) կադաստրային ծածկագիրն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:
80. Տեղեկությունների 26-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ հողամասի բարելավումների (շինությունների) օրենքին համապատասխան անվանումը՝ ըստ նպատակային նշանակության՝

1) նպատակային նշանակության տվյալների առումով բնակելի նշանակության դեպքում լրացվում է՝ 1 (ընդ որում, անհատական բնակելի տան համար՝ 1/1, բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանի համար՝ 1/2, այգետնակի (ամառանոցի) համար՝ 1/3, բազմաբնակարան բնակելի շենքի համար՝ 1/4, բազմաբնակարան շենքի ոչ բնակելի տարածքի համար՝ 1/5, ավտոտնակի համար՝ 1/6), հասարակական նշանակության դեպքում՝ 2, արտադրական նշանակության դեպքում՝ 3.

2) համասեփականատերերի կամ լիզինգառուների համար հողամասի միևնույն բարելավումների (շինությունների) տվյալներն առաջին

համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չեն լրացվում:

81. Տեղեկությունների 27-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ հողամասի բարելավումների (շինությունների) համապատասխան գործառնական նշանակության տեքստային տվյալները: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար հողամասի միևնույն բարելավումների (շինությունների) գործառնական նշանակության տվյալներն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չեն լրացվում:
82. Տեղեկությունների 28-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ հողամասի անավարտ (կիսակառույց) բարելավումների (շինությունների) ավարտվածության աստիճանին համապատասխանող նշումը՝ «անավարտ»-ի դեպքում՝ 0, «մինչև 50%»-ի դեպքում՝ 1, «50-80%»-ի դեպքում՝ 2, «80% և ավելի»-ի դեպքում՝ 3: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար հողամասի միևնույն բարելավումների (շինությունների) ավարտվածության աստիճանի տվյալներն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չեն լրացվում:
83. Տեղեկությունների 29-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ հողամասի բարելավումների (շինությունների) տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտին: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար հողամասի միևնույն բարելավումների (շինությունների) տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտին առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չի լրացվում:
84. Տեղեկությունների 30-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում են հողամասի բարելավումների (շինությունների)՝ յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի, այդ թվում՝ անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող մարմնի կողմից հաշվառված ինքնակամ կառուցված շինությունների՝ ընդհանուր ներքին մակերեսները, այդ թվում՝ անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող մարմնի կողմից հաշվառված ինքնակամ կառուցված շինությունների՝ քառակուսի մետրերով: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար հողամասի միևնույն բարելավումների (շինությունների) ընդհանուր ներքին մակերեսը առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չեն լրացվում:
85. Տեղեկությունների 31-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի՝ գյուղատնտեսական նշանակության հողամասի համար լրացվում է կադաստրային գնահատման կարգով հաշվարկված հաշվարկային զուտ եկամուտը՝ արտահայտված ՀՀ դրամով (1 հեկտարի համար): Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն գյուղատնտեսական նշանակության հողամասի կադաստրային գնահատման կարգով հաշվարկված հաշվարկային զուտ եկամուտն

առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդաբար նոր տողերում չի լրացվում:

86. Տեղեկությունների 32-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի համար (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) լրացվում է անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը՝ արտահայտված ՀՀ դրամով: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար անշարժ գույքի հարկով հարկման նպատակով միևնույն անշարժ գույքի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդաբար նոր տողերում չի լրացվում:
87. Տեղեկությունների 33-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի համար (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) լրացվում է անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված հողամասի կադաստրային արժեքը՝ արտահայտված ՀՀ դրամով: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար անշարժ գույքի հարկով հարկման նպատակով միևնույն անշարժ գույքի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) շուկայական արժեքին մոտարկված հողամասի կադաստրային արժեքը առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդաբար նոր տողերում չի լրացվում:
88. Տեղեկությունների 34-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի համար (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) լրացվում է անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված հողամասի բարելավումների (շինությունների) կադաստրային արժեքը՝ արտահայտված ՀՀ դրամով: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար անշարժ գույքի հարկով հարկման նպատակով միևնույն անշարժ գույքի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) շուկայական արժեքին մոտարկված հողամասի բարելավումների (շինությունների) կադաստրային արժեքը առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդաբար նոր տողերում չի լրացվում:
89. Տեղեկությունների 35-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի համար լրացվում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարեթիվը (օրինակ՝ 2005 թվականի հուլիսի 15-ի գրանցումը նշվում է՝ 15.07.2005): Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ամսաթիվն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդաբար նոր տողերում չի լրացվում:
90. Տեղեկությունների 36-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողի կամ լիզինգառուի համար լրացվում է 1,

յուրաքանչյուր համասեփականատիրոջ համար՝ ընդհանուր համատեղ սեփականության դեպքում լրացվում է 2, ընդհանուր բաժնային սեփականության դեպքում նշվում է բաժնեմասը (նշվում է կոտորակով, օրինակ՝ 1/2, 1/5, 2/5 և այլն), իսկ լիզինգառուների դեպքում՝ յուրաքանչյուր լիզինգառուի համար լրացվում է 2:

91. Տեղեկությունների 37-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է գրանցման սուբյեկտը, որի համար ֆիզիկական անձանց դեպքում նշվում է 1, կազմակերպության դեպքում՝ 2, Հայաստանի Հանրապետության (պետական սեփականության) դեպքում՝ 3, տեղական ինքնակառավարման մարմնի դեպքում՝ 4, այլ սուբյեկտի դեպքում՝ 5:
92. Տեղեկությունների 38-րդ սյունակում, ըստ տողերի, հաջորդաբար լրացվում է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարման, լիզինգի իրավունքի դադարման, հողամասի բարելավումների (շինությունների) քանդման կամ վերացման դեպքերում նշելով՝ 1, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման, լիզինգի իրավունքի ծագման, հողամասի նորակառույց բարելավումների (շինությունների) կամ հողամասի բարելավումների (շինությունների) հարկայնության փոփոխության, ինչպես նաև օրենքով սահմանված այլ հիմքերի դեպքերում նշելով՝ 2: Համասեփականատերերի կամ լիզինգառուների համար միևնույն անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարումը, ծագումը, հողամասի բարելավումների (շինությունների) քանդումը կամ վերացումը, հողամասի նորակառույց բարելավումը կամ հողամասի բարելավումների (շինությունների) հարկայնության փոփոխությունն առաջին համասեփականատիրոջ կամ լիզինգառուի տվյալներին հաջորդիվ նոր տողերում չեն լրացվում:

-

5. ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ, ԿԱՌՈՒՑԱԴԱՏՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՐԱԿԱՆ ԻՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

93. Անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող մարմինը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ կետերին, սույն հավելվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերին համապատասխան տեղական ինքնակառավարման մարմիններին է ներկայացնում վարձակալության, կառուցապատման, ինչպես նաև անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրված համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

1) «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» Էլեկտրոնային ծրագրում գույքային միավոր հանդիսացող յուրաքանչյուր անշարժ գույքի արխիվային ծածկագիրը,

2) գույքային միավոր հանդիսացող յուրաքանչյուր անշարժ գույքը նույնականացնող միավորի բանալին,

3) համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վարձակալի, կառուցապատողի, ինչպես նաև անհատույց (մշտական) օգտագործողի հաշվառման (գրանցման) կամ կազմակերպության գտնվելու վայրի հասցեի տեքստային տվյալները, ինչպես նաև տվյալ հասցեի նույնականացման բաղադրիչը,

4) համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վարձակալի, կառուցապատողի, ինչպես նաև անհատույց (մշտական) օգտագործողի տեքստային տվյալները՝ ֆիզիկական անձի ազգանունը կամ կազմակերպության անվանումը (ներառյալ՝ կազմակերպական-իրավական ձևը), ֆիզիկական անձի անունը, հայրանունը, ֆիզիկական անձի անձը հաստատող փաստաթղթի տվյալները կամ կազմակերպության պետական ռեգիստրում գրանցման համարը, ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը կամ կազմակերպության հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ),

5) յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի գտնվելու վայրի հասցեի տեքստային տվյալները, ինչպես նաև տվյալ հասցեի նույնականացման բաղադրիչը,

6) յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքի տեսակը,

7) յուրաքանչյուր գույքային միավոր հանդիսացող անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքի տեսակի նույնականացման համարը,

8) վարձակալության, կառուցապատման, ինչպես նաև անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրված հողամասի կադաստրային ծածկագիրը,

9) վարձակալության, կառուցապատման, ինչպես նաև անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրված հողամասի Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված հողային ֆոնդին համապատասխան նպատակային նշանակությունը,

10) վարձակալության, կառուցապատման, ինչպես նաև անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրված հողամասի Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքին համապատասխան գործառնական նշանակությունը կամ հողատեսքը,

11) վարձակալության, կառուցապատման, ինչպես նաև անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրված հողամասի չափը՝ հեկտարներով,

12) վարձակալության, կառուցապատման, ինչպես նաև անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրված շինությունների՝ օրենքին համապատասխան անվանումը՝ ըստ նպատակային նշանակության,

մակերեսը՝ արտահայտված քառակուսի մետրով,

13) վարձակալության, կառուցապատման, ինչպես նաև անհատույց (մշտական) օգտագործման պայմանագիրը նույնականացնող ծածկագիրը,

14) վարձակալության, կառուցապատման, ինչպես նաև անհատույց (մշտական) օգտագործման իրավունքի պետական գրանցման ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարեթիվը (օրինակ՝ 2005 թվականի հուլիսի 15-ի գրանցումը նշվում է՝ 15.07.2005):

15) վարձակալների, կառուցապատողների, անհատույց (մշտական) օգտագործողների փոփոխությունների, իրավունքների դադարեցման, նոր վարձակալների, կառուցապատողների, անհատույց (մշտական) օգտագործողների վերաբերյալ տեղեկությունները:

94. Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի վերաբերյալ տեղեկություններն անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող մարմնի կողմից ներկայացվում են Երևանի համայնքին՝ խմբավորված՝ ըստ անշարժ գույքի գտնվելու վայրի համապատասխան վարչական շրջանների:

Ձև N 1

Ձևաթղթի դիմային մասը

Մարզը՝

(անվանումը)

(ծածկագիր)

Համայնքը (բնակավայրը, Երևան քաղաքում՝ վարչական շրջանը)՝

(անվանումը)

(ծածկագիր)

Գնահատումը՝

դրոյ

(օրը, ամիսը,
տարեթիվը)

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՈՒ
ԴՐԱՆՑ ԳԼԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ (ՎԵՐԱԳԼԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

հ Արխի Միա Անշարժ գույքի սեփականատիրոջ (համասեփականատիրոջ)
/ -վայի -վոր կամ պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական
հ ն ծած ի բ օգտագործողի կամ լիզինգառուի (լիզինգառուների)`

կա- ան ֆիզիկական անձի	Ֆիզիկ	ֆիզիկ	ֆիզիկ	ֆիզիկ	ֆիզիկ
գիր ա-լի հաշվառման (գրանցման)	ական	ական	ական	ական	ական
կամ կազմակերպության	անձի	անձի	անձի	անձի	անձի
գտնվելու վայրի հասցեն	ազգա	անուն	հայր	անձը	հանր
Մա ՀամաՓողո Շեն Բնակ	ն-	ը	անուն	հաստ	ա-
ր- յն-քը ցը, ն քը արան			ը	ատող	
զը /վարչ րբ-ա /տու-ը (համ	ունը			փաստ	յին ծա
ա- նցքը,նը (արը)	կամ կ			աթղթի	ռալյութ
կան շ փակ-համ	ազմա			տվյալն-	
րջան ուղի արը	-կերպ			երը	
ը/ ն և)	ությա			կամ կ	յան հ
այլն	ն անվ			ազմա-	ամար
	ան-			կերպո	ա-
				ւթ-	
	ունը			նիշը	
				յան պ	կամ կ
				ետակ	ազմա-
				ան ռե	
				գիստր	կերպո
				ում գր	ւթյան
				անցմ	ՀՎՀՀ-
				ան հա	ն
				մարը	

12	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
1											
2											
3											

Անշարժ գույքի
գտնվելու վայրի
հասցեն

Հողամասի տվյալները`

Փողոցը, Շենքը/Շինու	Կադանապ Գործ Հողակ Գյուղա- Ոչ գյուղ Գնահ	Կարգ
նրբ- թ-	ս-տր տակ առն ա-դաս տնտես ա-տնտ	ատ-
անցքը, տունը	ային ա- ակա տրայի ական նեսակա	ակը
փակ- (համալուր, ծածկ	ն նշ ն գնա շանա-կն նշան	վող հ
ուղին և րը) բնակ	ագիր յին ն անա-հատմ ության ա-կուլթյողամ	
այլն ա-	ը շան կուլթյ ան շրջ հողատ ան հող	ասի

[illegible]

-

Ձև N 2

Ձևաթղթի դիմային մասը

Մարզը՝

(անվանումը)

(ծածկագիրը)

Համայնքը (բնակավայրը, Երևան քաղաքում՝ վարչական շրջանը)՝

(անվանումը)

(ծածկագիրը)

Գնահատումը՝

դրո՛ւ

(օրը, ամիսը,
տարեթիվը)

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԵՎ ԼԻԶԻՆԳԱՌՈՒՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

գիր	ա-լի Ֆիզիկական անձի հաշվառման (գրանցման) կամ կազմակերպության գտնվելու վայրի հասցեն Մա ՀամաՓողո Շեն Բնակ ր- յն-քը ցը, ն քը արան զը /վարչ րբ-ա /տոււը (համ ա- նցքը,նը (արը) կան 2 փակ-համ րջան ուղի արը ը/ ն ե) այլն	ՖիզիկՖիզիկՖիզիկՖիզիկ Ֆիզիկ ականականականական ական անձի անձի անձի անձի անձի ագգաանունհայր անծը հանր ն- ը անունհաստ ային ծ ը ատող առայր ունը փաստ էթյան կամ կ աթղթիհամա ազմա տվյալներանիշ -կերպ երը ը կամ ությա կամ կ կազմ ն անվ ազմա- ա-կեր ան- կերպո պուէթ ունը էթյան ան ՀՎ պետա ՀՀ-ն կան ռ եգիստ րում գ րանցմ ան հա մարը
-----	---	--

- 1
- 2
- 3

Ֆիզի ֆի ֆիզի ֆիզ	Փողո Շեն Շին Կա Նա	Գոր Հող Գյու Ոչ գյ Գնա Կա
ի- - -կակ ի-	ցը, ն քը ութ-յդա ատ	ծառ ա- դա ուղա -հա ր
գի-ան	րբ-ա /տուԼուԼը ս-տակ	-նա- տն -տնտո-

Հողամասի բարելավումների (շինությունների) տվյալները՝	Գյուղ Անշարժ Որի ա գույքի կազմում հարկով տնտ հարկմա Ե-սա ն նպատ կան ակով նշան անշարժ ա-կո գույքի (բ ւթյա ացառու ն թյամբ գյ հողաուղա-տ նտեսակ մասիան նշա կադ նակուլթյ աստ ան րայի հողերի) ն գն շուկայա	Իրավունքների՝
--	---	---------------

Կադանայ Գոր Ավա Տար Շի Հոգի Հոգի Հոգի Հոգի Հոգի Հոգի Հոգի Հոգի Հոգի Հոգի
 ս-տր ա-տ ծառ ր ա ն ա տ մ ա ժ ի ի մ -կանոնցմա
 ային ալ նակ Լ-թ բարեկամս Գլխան ն սու
 ծածկ այինան տվա ծա յա մանին-վր կապից-ձևը (բյեկ
 ագիր նշա-նշա ն մկանք Բեդիսիսայ ամբո տի լր
 ը նակ ծուր գնա ահատվ կշիւ Լամսադը ացու
 նան ութ եր աշ-փայտեքը կամ ը ցիչ
 ա-կ յան հա ես տրալի (Ի) (օրը, նդիա տվյա
 ութ յուն աստ տ ը (ինստ Կարասա) միս նուր բլներ
 ը իճան քմ) Իճա-տր ը, տաաժնա
 յուն ը ման ը (Ի) ային րեթիվյին
 ը (գտ դրալի րժե ը) կամ ը
 նվել) գուրը նդիա
 ու վ եկա՛՛ նուր հ
 այրի ուտոմ) ամա
) գո (ՀՀ դ տեղ)
 տին րամ/
 հա)

30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42

Ձև N 3

Ձևաթղթի դիմային մասը

Մարզը՝

(անվանումը)

(ծածկագիրը)

Համայնքը (բնակավայրը, Երևան
քաղաքում՝ վարչական շրջանը)՝

(անվանումը)

(ծածկագիրը)

Գնահատումը՝

դրու

(օրը, ամիսը,
տարեթիվը)

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԼԻԶԻՆԳԻ ԱՌԱՐԿԱ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ Արխի Միա Անշարժ գույքի սեփականատիրոջ (համասեփականատիրոջ) / վային վոր կամ պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական հ ծածկ ի բ օգտագործողի կամ լիզինգառուի (լիզինգառուների)` ազիր ան Ֆիզիկական անձի Ֆիզիկական անձի Ֆիզիկական անձի Ֆիզիկական ալի հաշվառման (գրանցման) ականական ա- ական ա-կան կամ կազմակերպության անձի անձի կան անձի անձի գտնվելու վայրի հասցեն ազգաանունանձի անձը հանր Մա ՀամաՓողո Շեն Բնակ ն ը հայր- հաստ ա- թղը յնքը ցը, ն քը արան անունատող /վարչ թբան/տուը (համ ունը ը փաստ յին ծա ական ցքը, նը (արը) կամ կ արթըթիռայուլթ- շրջանփակ համ ազմա տվյալնյան հ ը/ ուղի արը -կերպ երը ամար ն և) ությա կամ կ ա-նիշը այլն ն անվ ազմա- կամ կ ան ումը կերպո ազմա- ական կերպո պետա ւթյան կան ո ՀՎՀՀ- եգիստ ն թում գրանց ման հ ամար ը												
12	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	
1												
2												
3												

Անշարժ գույքի
գտնվելու վայրի
հասցեն

Հողամասի տվյալները`

Փողոցը, Շենք Շինու
նրբանցքը թ-

Կադանայա Գործ-
ս-տր -

Հողա Գյուղա-Ոչ գյուղ Գնահ Կար
կա-դա տնտես ա-տնտեսատվո գա-

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐ ՎԱՐՈՂ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՈՒ
ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ (ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՆՇԱՐԺ
ԳՈՒՅՔԻ ԼԻԶԻՆԳՈՒՄՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԼԻԶԻՆԳԻ ԱՌԱՐԿԱ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 6-Ի N 388- Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 388-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանվել է անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող մարմնի կողմից անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ու դրանց գնահատումների (վերագնահատումների) վերաբերյալ հաշվառող մարմիններին՝ տեղական ինքնակառավարման մարմիններին տեղեկություններ ներկայացնելու կարգը:

Որոշման հավելվածի 3-րդ կետով նախատեսվել է, որ անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող մարմինը տեղական ինքնակառավարման մարմիններին է ներկայացնում՝

1) գնահատման կամ վերագնահատման հարկային տարվա հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված ու գնահատված (վերագնահատված)՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ու դրանց գնահատումների (վերագնահատումների) վերաբերյալ ամփոփ

տեղեկությունները մինչև գնահատման (վերագնահատման) հարկային տարվա սեպտեմբերի 1-ը ներառյալ՝ համաձայն N 1 ձևի և դրա լրացման համար նախատեսված կարգի:

2) մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը ներառյալ՝ նախորդ ամսվա ընթացքում անշարժ գույքի սեփականատերերի և լիզինգառուների փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն N 2 ձևի և դրա լրացման համար նախատեսված կարգի:

3) մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը ներառյալ՝ նախորդ ամսվա ընթացքում անշարժ գույքի և լիզինգի առարկա հանդիսացող անշարժ գույքի հաշվառման ու գնահատման տվյալների փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն N 3 ձևի և դրա լրացման համար նախատեսված կարգի:

Որոշման նախաբանում որպես իրավական ակտի ընդունման իրավական հիմք նշվել են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը:

Այս առումով հարկ է նկատի ունենալ, որ Որոշման հավելվածում խոսք է գնում Ձև 1-ի, Ձև 2-ի և Ձև 3-ի լրացման կարգերի մասին, այնինչ, Որոշմամբ հիշյալ Ձևերը չեն սահմանվել:

Ներկայումս անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող մարմնի կողմից անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ու դրանց գնահատումների (վերագնահատումների) վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմիններին տեղեկություններ ներկայացնելու կարգի համաձայն համայնքներին ներկայացվող ելակետային տեղեկատվության մեջ բացակայում է շինությունների մակերեսը, որը որոշակի խնդիրներ է ստեղծում ըստ շինությունների մակերեսի հաշվարկվող տեղական վճարների հաշվարկման ժամանակ, մինչդեռ այդ տվյալների ներառումը էապես կբարելավի համայնքների կողմից պարտավորությունների հաշվառման գործընթացը:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտություն է առաջացել ներկայացվող տեղեկությունների շարքում ներառել նաև վարձակալության, կառուցապատման, ինչպես նաև անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրված համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վերաբերյալ տեղեկությունները:

Նկատի ունենալով նշվածը, Նախագծով առաջարկվում է տեղական ինքնակառավարման մարմիններին ներկայացվող ելակետային տեղեկատվության մեջ ներառել նաև շինությունների մակերեսին վերաբերող տեղեկությունը, կարգավորել վարձակալության, կառուցապատման, ինչպես նաև անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրված համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վերաբերյալ տեղեկությունների ներկայացման հետ կապված հարաբերությունները:

Տվյալ պարագայում նկատի ունենալով այն հանգամանքը, որ Որոշմամբ Ձևերը չեն սահմանվել, մինչդեռ, Որոշմամբ սահմանված կարգավորումները

ամբողջությամբ վերաբերվում են հիշյալ Ձևերի լրացման կարգին, միևնույն ժամանակ, նկատի ունենալով տեղական ինքնակառավարման մարմիններին ներկայացվող ելակետային տեղեկատվության մեջ սույն հիմնավորմամբ նշված տեղեկությունները ներառելու անհրաժեշտությունը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ և 37-րդ հոդվածների կարգավորումները՝ առաջարկվում է Որոշումը ուժը կորցրած ճանաչել, փոխարենը ընդունել նոր որոշում՝ դրանում ներառելով նաև Որոշմամբ հիշատակված Ձևերը: Միևնույն ժամանակ, Նախագծի ընդունման արդյունքում Որոշումը կհամապատասխանեցվի «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով սահմանված պահանջներին:

Առկա խնդիրների առաջարկվող լուծումները և կարգավորման առարկան.

Նախագծի ընդունման արդյունքում անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող մարմնի կողմից անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ու դրանց գնահատումների (վերագնահատումների) վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմիններին տեղեկություններ ներկայացնելու կարգի համաձայն համայնքներին ներկայացվող ելակետային տեղեկատվության մեջ կներառվի շինությունների մակերեսը, ինչն իր հերթին կբարձրացնի համայնքների կողմից ըստ շինությունների մակերեսի հաշվարկվող տեղական վճարների հաշվառման ճշտությունը: Նախագծի ընդունման արդյունքում կկարգավորվեն վարձակալության, կառուցապատման, ինչպես նաև անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրված համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վերաբերյալ տեղեկությունների ներկայացման հետ կապված հարաբերությունները: Միևնույն ժամանակ, Նախագծի ընդունման արդյունքում Որոշումը կհամապատասխանեցվի «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով սահմանված պահանջներին:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք.

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Երևանի քաղաքապետարան.

Ակնկալվող արդյունքը.

Ներկայացված նախագծի ընդունման արդյունքում անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող մարմնի կողմից անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ու դրանց գնահատումների (վերագնահատումների) վերաբերյալ ներկայացվող ելակետային տեղեկատվության մեջ կներառվի շինությունների մակերեսը, ինչն իր հերթին կբարձրացնի համայնքների կողմից ըստ շինությունների մակերեսի հաշվարկվող տեղական վճարների հաշվառման ճշտությունը, կկարգավորվեն վարձակալության, կառուցապատման, ինչպես նաև անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրված համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վերաբերյալ տեղեկությունների ներկայացման հետ կապված հարաբերությունները և կբարելավվի քաղաքացիների սպասարկման մակարդակը, ինչպես նաև կբարելավվի օրենսդրական դաշտը:

Լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը, պետական և

տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում եկամուտների և ծախսերի սպասվելիք փոփոխությունները.

Նախագծի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չի առաջանում, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացում և նվազեցում չի նախատեսվում:

Նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին.

Նախագծի ընդունումն առաջացնում է ՀՀ կառավարության 05.10.2017թ. N 1337-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն:

Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ».

Նախագիծը բխում է «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050», «Կառավարության 2021-2026թթ. ծրագիր» /կետ 6.10, 4-րդ ենթակետ/ ռազմավարական փաստաթղթերի դրույթներից:

Մասնավորապես, հանրային միջոցների օգտագործման հասցեականության բարձրացման և ռեսուրսների հավաքագրման արդյունավետության բարձրացման նպատակով կբարելավվեն առկա ընթացակարգերը, կճշտվեն առկա բազաների տվյալները և կբարելավվի քաղաքացիների սպասարկման մակարդակը: